

Շայ մամուլ եւ համայնք

Այս համարում

Չայերեն բաժին

- 1- Շայ Մամուլ եւ համայնք.....1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք3
- 3- Լուրեր – Իրան..... 4
- 4- Լուրեր – Հայաստան4
- 5- Միջազգային.....5
- 6- Հասարակական.....6
- 7- Զանազանք.....8
- 8- Մշակութային.....9



Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր - Իրան, Հայաստան1
- 2- Լուրեր - Միջազգային2

Ճապիկի առաջին էջում՝

2008թ. Ամանոր՝ ԲաՖՖի համալիր– Թեհրան

Ճապիկի վերջին էջում՝

2008թ. Ամանոր՝ ԲաՖՖի համալիր– Թեհրան

Չամար 139, Չունվար, 2008թ.

No. 139, January 2008

ماهنامه لویس – شماره ۱۳۹ دی ماه ۱۳۸۶

«Ալիք» օրաթերթի դեկտեմբերի 27-ի համարում Լույս տեսավ Պատգամավորական ժողովի դիվանի մի հաղորդագրություն, որտեղ ոչ ճիշտ և ապատեղեկատվություն է գնահատվել «Լույս» ամսագրի օգոստոս ամսի 135 համարի առաջին էջի հոդվածը: Այս համարում մենք ներկայացնում ենք սույն հաղորդագրությունը և «Լույս»-ի 135 համարի հոդվածը, որը պատճառ է դարձել Պատգամավորական ժողովի դիվանի նման հաղորդագրության: Խնդրում ենք ՊԺ-ի հարգելի դիվանին, որ նշի այն մասը, որը ապատեղեկատվություն և անճիշտ է համարում, որպեսզի խոսքը օդի մեջ ասված չմնա: Կամ էլ հերքեն որևէ մոտեցում, որ ցուցաբերել են տվյալ խորհրդակցական հանդիպման ժամանակ:

Թեհրանի Ազգային Առաջնորդարանի գործիչների մոտեցումները միությունների եւ մամուլի նկատմամբ

2007 2007 թվականի Չունիսի 19-ին Ազգային Առաջնորդարանում Պատգամավորական ժողովի դիվանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում, որտեղ մասնակցում էին «ԲաՖՖի» համալիրի պատգամավոր անդամները, ՊԺ-ի դիվանը, նախկին Թեմական Խորհրդի նախագահ, Կրթական Խորհրդի նախագահ ու մի քանի պատգամավորներ: Չանդիպման ընթացքում խոսվեց անցյալի որոշ հարցերի, ազգային առաջնորդարանի և «քույր» ու ոչ քույր՝ «եղբայր» միությունների և իրանահայ մամուլի միջև հարաբերությունների մասին: Մեր Ազգային Առաջնորդարանի գործիչները իրենց կարծիքները հայտնեցին, ճշտեցին որոշ դիրքորոշումներ և քաղաքականության գծեր: Դրանք ճիշտ գնահատելու և քննարկման առարկա դարձնելու համար անհրաժեշտ ենք տեսնում, որ համայնքի մյուս ազգային գործիչներն ու մտավորականները նախ տեղյակ լինեն նման մտքերից ու կողմնորոշումներից և, եթե անհրաժեշտ է, իրենց շտկումներն ու մտքերն արտահայտեն այդ կապակցությամբ: Արտահայտված մտքերն ու կողմնորոշումները ներկայացնում ենք հետևյալ կետերի ձևով՝

- 1- Քանի, որ ազգային իշխանության մեծամասնությունը դաշնակցությունն է կազմում, դա իրենց իրավունք է տալիս, որ իշխեն և ինչ որ տեղ միությունները գործ ունեն կուսակցության հետ:
- 2- Ազգային Առաջնորդարանը ամբողջ Իրանի հայության պատասխանատուն է:
- 3-Եթե որևէ միություն իր կազմալուծումից հետո ունեցվածքը չի հանձնում Ազգային Առաջնորդարանին, որը պետք է շեշտված լինի իրենց ծրագիր կանոնագրում, ուրեմն մեր հակառակորդն է, և նման միություններին որևէ ձևով չպետք է ազգային առաջնորդարանը որևէ սերվիս տա:
- 4-Եթե որևէ մամուլ, որ Ազգային Առաջնորդարանի իշխանության տակ չէ, մենք նրան որևէ սերվիս չենք տալու:

5- Ով ուզեցել է ցույց տա կամ հիմա էլ ուզում է ցույց տալ, որ Ազգային Առաջնորդարանին դեմ է՝ նոր ուղղագրությամբ է գրել, որը համարում ենք սովետական ուղղագրություն:

6- Մեր հակառակորդների պատճառով մենք դժվարություններ ունեցանք, որովհետև Առաջնորդարանի հակառակ խոսքեր ասացին:

7- Գոյություն ունի կարմիր գծեր ու սահմաններ, որը ճշտված է ազգային Առաջնորդարանի կողմից, հակաթեմական մարդիկ իրավունք չունեն մուտք գործեն քույր միություններ և աշխատանք տանեն:

8- Եթե ուզում ենք մոտենալ, երկու կողմերն էլ պիտի զիջեն, թերթում թունդ խոսքեր չպետք է ասվի: Ոչ քույր միությունների ու մամուլի արարքն է, որ ճշտում է այս կողմի՝ Ազգային Առաջնորդարանի, դիրքը:

9- Ազգային Առաջնորդարանի մակարդակը և մոտեցումը այնպես է, որ պատրաստ չէ՝ այն խմբերի, միությունների կամ թերթերի հետ, որոնք սովետական ուղղագրություն են օգտվում, բանակցել կամ համագործակցել: Բայց որպես անհատներ կարելի է նրանց հետ խոսել կամ բանակցել: Եթե նրանց հրավերներն իրենց միջոցառումներին մասնակցելու համար ընդառաջվել է, սխալ է եղել և պետք է մերժվեն:

10- Ազգային Առաջնորդարանի ներքին տնօրեն կամ գրասենյակի պատասխանատու՝ Պրն. Սերոժ Օհանյանին իրավունք է տրված, որ իր հանցողությամբ ընդունի կամ մերժի որոշ միության դիմումը, որը ուղղված է Կրթական Խորհրդին:

11- Դաշնակցության կուսակցությունը «թաքու» չէ, գաղտնի էլ չէ, կուսակցությունը իր տեղն ունի: Եթե կուսակցությունը համաձայն չի մի բանի հետ, պետք է մարդկանց ասենք: Կուսակցության ձայնը պետք է հասցնել մարդկանց:

12- Հիմա ժամանակաշրջանը շատ է փոխվել և նախկին ձևով չենք կարող շփվել: Մեր Ազգային Առաջնորդարանի հարաբերությունը շատ է փոխվել, նույնիսկ երկու տարի առաջվա համեմատ էլ շատ է փոխվել, և դեպի բարելավում է զնացել և մենք հարցերին առաջվա նման չենք նայում:

13- Որևէ միություն, որ իրեն անկախ է կարծում և ազգային առաջնորդարանը չի ընդունում և չի գրանցվում այնտեղ, Ազգային Առաջնորդարանը կնտածի նման միության հետ համագործակցի, թե՛ ոչ:

14- Միության շարժողական և անշարժ գույքերն կարևոր չեն, միության բարոյականը պետք է կապվի Առաջնորդարանին: Օրինակ, եթե դասախոս է հրավիրվում Հայաստանից, դա պետք է միայն Առաջնորդարանի գծով լինի: Եթե Ապրիլ 24 է ձեռնարկվում, միայն Առաջնորդարանի միջոցով պետք է լինի:

15- Եթե ազգային Առաջնորդարանը որևէ հրահանգ է տալիս բոլոր միությունները պետք է կատարեն: Այս հրահանգների բովանդակությունը առանց քննարկելու և իմանալու պետք է կատարվեն:

Հաղորդագրություն իրանահայ մամուլին (ԹՀԹ-ի դիվանի կողմից)

Նկատի ունենալով, որ ԹՀԹ Պատգամավորական ժողովի նոյեմբերի 16-ի նիստի օրակարգում արծարծված խնդիրներից մեկը հայատառ մի թերթում սխալ կերպով է

անդրադարձ գտել, Պատգամավորական ժողովի դիվանը նպատակահարմար նկատեց այդ նիստի պաշտոնական հաղորդագրությունը հրապարակել ի գիտություն ու լուսաբանում մեր ազնիվ համայնքի: Թեհրանի Հայոց Թեմի 13-րդ Պատգամավորական ժողովի 43-րդ նիստը գումարվեց 2007 թ. նոյեմբերի 16-ին Թեհրանի Ազգային Առաջնորդարանում՝ նախագահությամբ թեմիս բարեխնամ Առաջնորդ Ս. Սեպուհ Արք. Սարգսյանի և ատենապետությամբ դոկտ. Լևոն Դավթյանի և պրն. Ռուբիկ Կարապետյանի:

Ժողովի դիվանը երկու պատգամավորների ստորագրությամբ մի բողոքագիր էր ստացել, որն էլ ներկայացրեց ժողովին: Հիշյալ բողոքագրի բովանդակությունը վերաբերում էր Պատգամավորական ժողովի դիվանի հրավերով կայացած մի խորհրդակցական հանդիպման ընթացքում արծարծված խնդիրների մասին անճիշտ տեղեկությունների և միտումնավոր արտահայտությունների հրատարակմանը «Լույս» ամսագրում, որը ոչ միայն խեղաթյուրում էր իրականությունը, այլև տարակուսանքի ու տհաճ վիճակի առջև էր կանգնեցնում ընթերցողին:

Խնդիրը ժողովում ներկա պատգամավորների կողմից հարցադրումների և ըստ էության արտահայտությունների միջոցով հանգամանորեն քննարկման ենթարկվեց, վեր հանվեցին այս կարգի թյուր ու թերի և միտումնավոր հողվածների ու անճիշտ տեղեկագրերի հրատարակման վնասակար կողմերը մեր համայնքային կյանքում, ընդ որի՝ փոխանակ ներկա պայմաններում ի շահ հասարակության միասնականության ու կառուցողական համագործակցության հիմքեր ստեղծելու, նմանօրինակ հողվածներով թերահավատություն, խռովություն և պառակտում են սերմանում հասարակայնության մեջ և ստեղծում անախորժ վիճակ:

Պատգամավորական ժողովս ստանալով երկու պատգամավորների կողմից ստորագրված բողոքագիրը և հանգամանորեն անդրադառնալով արծարծված խնդրին՝ նշյալ խորհրդակցական հանդիպման մասին պատգամավոր Ռուբիկ Սարգսյանի չթույլատրված և ապատեղեկատվական հրապարակումը «Լույս» թերթում, հետևյալ որոշման հանգեց, որ այսուհետև որևէ մի պատգամավոր իրավունք չունի հանուն Պատգամավորական ժողովի գրավոր կերպով տեղեկանք տալ մամուլին, քանի որ այդ իրավունքը վերապահված է միայն թեմակալ Առաջնորդին և Պատգամավորական ժողովի Դիվանին:

*Դիվան Թ 13-րդ շրջանի
Պատգամավորական ժողովի*

Վերոհիշյալ Հաղորդագրության մասին («Լույս» ամսագիր)

Մեր համայնքի ազնիվ անդամների տեղեկատվության դաշտի ընդլայնման և սխալները ճշտելու նպատակով հարկ ենք համարում նախ մի քանի հարց ու խնդիր ուղղել հարգելի ՊԺ-ի դիվանին.

1- Նկատի ունենալով «Լույս» համար 135-ում տպագրված և ՊԺ-ի դիվանի կողմից վրդովմունքի պատճառ դարձած վերոհիշյալ հողվածը՝ հիշեցման կարգով այս համարում նշում ենք այդ հողվածում արծարծված ձեր (ՊԺ-ի Դիվանի) բառացի խոսքերը:

Խնդրում ենք նշել, թե որն է անճիշտ տեղեկություն կամ որն էք հերքում, որպեսզի մենք ճշտումներ կատարենք:

2- Խորհրդակցությանը մասնակցել են 6 պատգամավոր, որից երկուսն են բողոքել (հատուկ կուսակցական հակումներով), ինչո՞ւ մնացած չորս պատգամավորներն ու «ԲաՖՖի» համալիրի հիմնադիր անդամը, որ ներկա են եղել այդ խորհրդակցական հանդիպմանը, նշված տեղեկատվությունը անճիշտ չեն համարում:

3- Ի՞նչ հիմունքների վրա եք ասում՝ չթույլատրված տեղեկություններ: Ձեր նշված խոսքերը ընդհանուր ձեռնարկներ են մեր ազնիվ համայնքի միությունների ու «հայատառ» մամուլի նկատմամբ, ձեր կարծիքով սա կարևոր հարց չէ՞, որ մեր ազնիվ համայնքը տեղյակ լինի ձեր քաղաքականությունից միությունների ու մամուլի նկատմամբ: Ո՞ր օրենքի հակառակ ենք մենք շարժվել և ո՞ր օրենքն է սահմանափակում մամուլի տեղեկությունների հրապարակումը:

4- Մեր միտումը կամ մամուլի առաքելությունը մամուլի քաղաքականությունների մասին տեղեկացնելն է մեր ազնիվ համայնքին ու ժողովրդին, ոչ թե նրանց ապատեղեկատվության մեջ պահելն ու գրկելը:

5- Դիվանի հաղորդագրությունը չի համապատասխանում Պատգամավորական ժողովի ընդունած բանաձևին ու որոշմանը (դիմեք ՊԺ-ի 43-րդ նիստի արձանագրությանը) և դուք ո՞ր օրենքի համաձայն եք շրջանցել ընդունված բանաձևը և ինչո՞ւ ընդունված որոշումը կամ բանաձևը չեք հրապարակել:

6- Այդ որոշումը, որ ՊԺ-ի դիվանն է արել, ըստ որի՝ ոչ մի պատգամավոր իրավունք չունի Պատգամավորական ժողովի անունից գրավոր նյութ կամ որևէ հոդված տրամադրի մամուլին, այնքան հասկանալի և ընդունելի փաստ է և մամուլի հարցի շուրջ Պատգամավորական ժողովում չի խոսվել և մեր համայնքի պատմության ընթացքում մամուլի փաստ գրանցված չէ: Ոչ մի պատգամավոր գոնե 12-րդ և 13-րդ շրջանի պատգամավորներից ոչ մեկը մամուլի գործ չի արել և դուք սխալ հիմք եք ընդունել ձեր հաղորդագրության համար:

Քանի տարի ուշացումով, սակայն ողջունելի

«Ալիք» օրաթերթի 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «դիտանկյուն» բաժնում լույս տեսավ մի հոդված, որտեղ այսպես էր նկատվում, որ ԹՀԹ-ի Պատգամավորական ժողովում ճիշտ է եւ լավ կլինի համայնքի հայկական մամուլի բոլոր ներկայացուցիչները մասնակցեն դմբաց նիստերին ու արտացոլեն ՊԺ-ի անցուդարձը: Նման մոտեցումը «ալիքականների» կողմից պետք է ողջունելի համարել, սակայն համառոտ կերպով անդրադառնանք այս հարցի անցյալին:

Մոտ 7 տարի առաջ, երբ 12-րդ Պատգամավորական ժողովը ընտրվեց, մի խումբ ժողովրդավար պատգամավորներ նկատեցին, որ իրանահայ մամուլից միայն «Ալիք» օրաթերթն է մասնակցում նիստերին, նրանք առաջարկեցին խտրականություն չընել եւ թույլ տալ բոլորին մասնակցելու և արտացոլելու դմբաց նիստերը, սակայն, դժբախտաբար, նրանք բոլորովին արգելեցին մամուլի ներկայությունը ՊԺ-ի նիստերին: Քանի անգամ եւ գրավոր եւ բանավոր ձևով այդ պատգամավորները նույն առաջարկը ներկայացրին ՊԺ-ի հարգելի դիվանին (դիմել ՊԺ-ի արձանագրություններին ու 12-րդ ՊԺ-ի կողմից լույս տեսած բրոշյուրին), սակայն

դիվանի անդամները, որոնք «Ալիք» օրաթերթի գաղափարակիցներն էին, մերժեցին եւ նույնիսկ ամեն կերպ խուսափեցին այդ հարցի օրակարգ դառնալուց եւ որոշում ներկայացնելուց:

7 տարի ուշացումով «Ալիք»-ը հասել է ժողովրդավար պատգամավորների եզրակացությանը, սա մտահոգության տեղիք է տալիս, որ մեր հայկական իրականության մեջ կուսակցություններն ու գաղափարականները միշտ պետք է լինեն առաջնորդները եւ ժամանակից շուտ պետք է նրանք կանխորոշեն ժողովրդի պահանջներն ու քայլեր ձեռնարկեն այդ կապակցությամբ եւ ոչ թե 7 տարի հետ լինեն ժողովրդից: Ինչպես դկտ. Հարմիկ Դավթյանն է ասում. «Մենք դեռ չգիտենք, թե մեկ տարի հետո ինչ ենք ուզում անել» (դիմել անցյալ ամիսների նրա ճառերին, որ ունեցել է ՊԺ-ի նիստերի ժամանակ):

Սակայն այդուհանդերձ ողջունելի պետք է համարել «Ալիք»-ի այս մոտեցումը եւ հույսով ենք «Ալիք»-ի գաղափարակիցները ՊԺ-ի դիվանում հետևեն այս խորհրդին: Համայնքը նաեւ հույսով է, որ սա հերթական խաղ չլինի, կը հետևենք ու կտեսնենք:

Լուրեր

Իրանահայ Համայնք

Ինչ է անցնում Պատգամավորական ժողովում

2007 թվականի նոյեմբերի 16-ին 43-րդ նիստում հատուկ անցուդարձ եղավ և անտրամաբանական մի որոշում ներկայացրեց ՊԺ-ն, որին կողմ քվեարկեցին շուրջ 25 պատգամավորներ, ըստ որի՝ մտադրություն կար սահմանափակել պատգամավորի խոսքի ազատությունը և պահանջում էին, որ յուրաքանչյուր գրավոր տեղեկություն ՊԺ-ից, պետք է վավերացված լինի դիվանի կամ Սրբազան Հոր կողմից, և արգելվում էր որևէ պատգամավորի գրավոր նյութի հանձնումը որևէ թերթի: Սա Պատգամավորական ժողովի կանոնակարգի կոպիտ խախտում է և ՊԺ-ի օրենքում որևէ մամուլի բան չկա: Այս երևույթը դատապարտվեց «Արաքս» շաբաթաթերթի և «Հույս» երկշաբաթաթերթի, մի շարք պատգամավորների ու անկախ մտավորականների կողմից: Այս որոշման ժամանակ բոլորովին չուզեցին անդրադառնալ այն նյութի բովանդակությանը, որը բորբոքել էր մեր «ազգայիններին»: Այդ նյութը խոսում էր այն մասին, թե ինչպես ՊԺ-ի դիվանը վերջերս փորձ է արել միություններին սահմանափակել, Հայաստանի հետ միությունների հարաբերվելը արգելել և ամեն կերպ աշխատել միությունները ենթարկել իրենց (տես օգոստոս ամսի «Լույս» համար 135-ի էջ 1): Այս հարցը դեռ պետք է քննարկվի և մեր համայնքի մտավորականները իրենց կարծիքը հայտնեն, որ ապագայում մամուլի թերություններ թույլ չտրվի, որպեսզի մեր ազգային իշխանության վարկը չընկնի ժողովրդի և պետության մոտ: Եթե անհրաժեշտ լինի 43-րդ նիստի մանրամասությունները կարող ենք ներկայացնել ապագայում և ժողովրդի դատողության նյութ դարձնել: Հենց մամուլի մոտեցումը պատճառ դարձավ, որ հաջորդ օրվա նիստին, որպես բողոք ներկա չլինեն մի շարք պատգամավորներ և 44-րդ նիստը քվորում չունեցավ և ՊԺ-ն մնաց անգործ:

Ամենահետաքրքիրն այն էր, որ ձայն տվողների մեծ մասը չէին իմանում ինչի մասին է խոսքը և միայն որոշ կուսակցականների ճնշման ներքո էին ձեռք բարձրացնում, նիստից երկու օր հետո միայն որոշ պատգամավորներ սկսել էին փնտրել «Հոյս»-ի համար 135-ը և կարդալ :

44-րդ նիստը քվորում չունենալու պատճառով բեկանվեց: Հաջորդ՝ հետաքրքիր 45-րդ նիստը, տեղի ունեցավ դեկտեմբերի 18-ին, որտեղ ներկա էին 29 պատգամավոր: Այս նիստի ընթացքում ընթերցվեց Թեմական խորհրդի 2007-2009 շրջանի ծրագիրը և միամյա նախահաշիվը, քննարկվեց պատգամավորների կողմից և նկատվեց, որ որոշ ընդհանուր ծրագրեր պետք է պարայագապես ներկայացվի ՊԺ-ին և ստանա իր հաստատումը, օրինակ բնակարանաշինության, Արամ սրահի վաճառքի և այլ հարցեր: Հաստատվեց, որ Ս. Գրիգոր և Ս. Թարգմանչաց եկեղեցիներին կից բնակարանները գնել և միացնել տվյալ եկեղեցիներին: Այս ծրագիրը և նախահաշիվը նախորոք ուղարկվել էր պատգամավորներին ծանոթանալու համար: Պատգամավորների կողմից պահանջվեց ներկայացնել մեր ունեցած գրանցված կալվածների ցանկը և դիվանի փոխատենապետ պրն. Ռուբիկ Կարապետյանը պնդեց, որ պետք է գրավոր դիմում ներկայացվի և անմիջապես 8 պատգամավորի ստորագրությամբ մի գրություն պատրաստվեց ու ներկայացվեց դիվանին: Մեր ունեցած կալվածների ցանկը պատգամավորները պահանջեցին, որպեսզի կալվածներ վաճառելիս իմանան ինչ ունեն և որն է հարմար վաճառելու կամ որի վրա հարմար է շինարարական աշխատանք տանել:

Այդ հանդիպման վերջում մեր թեմի Առաջնորդ Գերաշնորհ Ս. Սեպուհ Ս. Արք. Սարգսյանը ելույթ ունեցավ և իր վրդվուները հայտնեց պրն. Լևոն Ահարոնյանի նամակից, որը հղվել է Կիլիկիո կաթողիկոսությանը՝ Արամ Ա. Վեհափառին: Առաջնորդը ասաց.-«Մեր ժողովրդի մասին մամուլի մեջ նամակ կը գրվի մեր Կաթողիկոսության Կայրապետին և Կաթողիկոսի տիտղոսին ոչ պատշաճ ձևով: Ուրիշ մի նամակ նրան կը երկրորդի (Սա վերաբերում էր հայտնի փաստաբան և ազգային գործիչ պրն. Ալբերտ Բերնարդիի նամակին): Այդ նամակի միջոցով մեր ազգային բոլոր գործունեությունը, Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսությունը կառնամարվի և ոչ ճիշտ պատմական տեղեկություններ կը հաղորդվի և մարդիկ կը հավատան այս տխրահռչակ նամակին: Եթե մենք և Պատգամավորական ժողովը լռում է, կը նշանակե, որ մենք ընդունում ենք և աշխատանք չի տարվել և մենք նահանջել ենք: Այս նամակի գրողը պրն. Ահարոնյանն է, ես նրան կսիրեմ, բայց ճշմարտությանը ավելի շատ կսիրեմ: Նամակում ուրիշ շատ բաներ կան գրված, ես դիմում եմ Պատգամավորական ժողովին, արդեն երեք շաբաթ անցել է և եթե անտարբեր անցնենք, նշանակում է, որ ընդունում ենք և ես որպես Առաջնորդ ամոթալի կզգամ»:

Պատգամավորների կողմից տարբեր մոտեցումներ ցուցաբերվեց այս կապակցությամբ: Մի խումբ պատգամավորներ գտնում էին, որ այդքան էլ վիրավորական չէ այս նամակը և կառուցողական բնույթ ունի և կարելի է պրն. Ահարոնյանին հրավիրել և երկխոսություն ունենալ, մի այլ խումբ պատգամավորներ նամակը համարում էին ամբոխավարություն և պետք է դատապարտել: Այս հարցը մնաց օդում և դիվանը չկարողացավ կողմնորոշվել և ՊԺ-ն որևէ վերջնական

որոշում այդ կապակցությամբ չունեցավ: Հունվարի վերջում պետք է գումարվի հաջորդ նիստը: Հույսով ենք բոլոր պատգամավորների ավելի խոհեմ և միասնական ջանքերի շնորհիվ հաղթահարվի բոլոր դժվարությունները՝ բոլոր պատգամավորների հարգանքն ու դիրքը պահելով

Թղթակից՝ Ս. Համբարչյան

Իրան

Իրանի Թավրիզ քաղաքում կը բացվի Հայաստանի հյուպատոսարան

ԻՌԱՆ-ն վկայակոչելով Իրանի ԻՀ կառավարության տեղեկատվական կայքէջը՝ հաղորդեց, որ նախարարները իրենց գումարած նիստի արդյունքում համաձայնել են, որ Թավրիզ քաղաքում բացվի Հայաստանի Հանրապետության հյուպատոսարան, որը մեկտեղված է փոխադարձ քայլով:

Այդ վավերացումը նախագահի առաջին տեղակալի կողմից հղվել է իրագործման նպատակով:

Հայաստան

ԸՆՆԱԿԱԿԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆՐԻ ԲՈԼՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԳՐԱՆՑՎԵՑԻՆ

ԿԸՀ-ն հունվարի 18-ի նիստում առաջադրված բոլոր 9 թեկնածուները համարվեցին գրանցված առանց քվեարկության, քանի որ նրանց գրանցման վերաբերյալ որևէ առարկություն չկար: Գրանցվեցին Մերժ Սարգսյանը, Վահան Հովհաննիսյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն Սանուկյանը, Արթուր Բաղդասարյանը, Արտաշես Գեղամյանը, Տիգրան Կարապետյանը, Արամ Հարությունյանը եւ Արման Մելիքյանը:

«Սասունցի Դավիթ» մուլտֆիլմն ամբողջությամբ պատրաստ կլինի 2008թ-ի վերջին

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 2008թ-ի վերջին նախատեսվում է ավարտել «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմի վերջին՝ 8-րդ մասի նկարահանման աշխատանքները:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրեց «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գեւորգ Գեւորգյանը, յուրաքանչյուր տարի նկարահանվել է մեկ 10 րոպեանոց մաս: «Դրանք առանձին ցուցադրելն այն ազդեցությունը չի ունենա, ինչ՝ ամբողջությամբ: Այդ պատճառով որոշեցինք այն հասարակությանը ներկայացնել ամբողջությամբ պատրաստ լինելուն պես»,-ասաց Գ. Գեւորգյանը:

Նրա խոսքով, այսօր իրենք մի խնդրի առաջ են կանգնել, ըստ որի՝ առաջին 3 սերիաները որակական առումով չեն համապատասխանում ներկայիս չափանիշներին, քանի որ մուլտֆիլմի նկարահանումները սկսվել են 2002թ-ին, իսկ ժամանակին զուգընթաց զարգացել է տեխնոլոգիան, փոխվել են մոտեցումները, ձայնային, որակական չափանիշները եւ այլն:

«Անհրաժեշտություն է առաջացել վերադառնալ առաջին 3 սերիաներին, ոչ թե նորից նկարահանելու նպատակով, այլ փոփոխություն անելու», - ավելացրեց Գ. Գեւորգյանը: Պետական միջոցներով նախատեսված աշխատանքներն ավարտվում են այս տարի, իսկ առաջացած խնդիրը լուծելու համար անհրաժեշտ գումար առաջիմ չկա: Ազգային կինոկենտրոնը դիմել է մի քանի ընկերությունների, որպեսզի աջակցեն 20-25 մլն դրամով՝ ամբողջ նկարահանված մասերը նույն որակի, չափանիշների մեջ ներկայացնելու համար:

Մուլտֆիլմի նկարահանման համար ծախսվել է 1 մլն դրամ: «Շատ խոսակցություններ եղան նկարահանման դանդաղ ընթացքի վերաբերյալ, բայց մի քանի պատճառներ կան, նախ՝ գումարային», - ասաց Գ. Գեւորգյանը: Աշխատանքները շուտ ավարտելու համար անհրաժեշտ էր կամ մասնագետներ հրավիրել Ռուսաստանից կամ նյութերն այնտեղ տանել: Երկու տարբերակն էլ, Գ. Գեւորգյանի դիտարկմամբ, մի քանի անգամ ավելի թանկ են Հայաստանում կատարվող աշխատանքներից:

Միջապգային

Հրանդ Դինքի հիշատակին



Այսօր մեր հայրենակից Հրանտ Դինքի մահվան տարելիցն է: Մեկ տարի առաջ, հունվարի 19-ին, տեղական ժամանակով 15-ին Ստամբուլում «Ակօս» շաբաթաթերթի խմբագրական մուտքի մոտ Օգյուն Սամասթ կոչեցյալ մարդասպան ստահակը ատրճանակով թիկունքից երեք կրակոց էր արձակել Դինքի վրա, ապա եւ դիմել փախուստի: Իրավապահ մարմինները սպանությունից 36 ժամ հետո Սամսունի ավտոկայանում ձերբակալել էին Սամասթին: Սակայն Տրապիզոնի անվտանգության վարչությունում, վարչության աշխատակիցները, չթաքցնելով իրենց հիացմունքը պատանի ստահակի նկատմամբ, թուրքական մամուլի վկայությամբ հերթի էին կանգնել, որ

լուսանկարվեն նրա հետ: Ավելին, որպեսզի լուսանկարը տպավորիչ լինի, նրանք մարդասպանի ձեռքին տվել էին Թուրքիայի դրոշը, կարծես ընդգծելու համար, որ դա ներկված է Օգյուն Սամասթի նման պատանի, թե մեծահասակ բազմաթիվ ստահակների զոհը դարձած ժողովուրդների, ինչպես նաեւ հազարավոր անմեղ մարդկանց արյունով:

Հրանտ Դինքի հուղարկավորությանը մասնակցել էր հայերի, հույների, ասորիների, թուրքերի, քրդերի, ալավիների ավելի, քան 200 հազարանոց բազմությունը: Այս հանգամանքը, ինչպես նաեւ սգո թափորի «Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք» կարգախոսը Թուրքիայում աննախադեպ բնույթ էր հաղորդել թաղման արարողությանը: Եթե ոչ աննախադեպ, ապա ակնհայտ լկտիություն էր Դինքի նկատմամբ կարեկցանքի, իսկ ընտանիքին վշտակցություն արտահայտող այդ կարգախոսին ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքի ստեղծած ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցության, ազգայնական շարժում եւ վերջինի պես «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպությունը հանդիսացող «Մեծ միասնություն» կուսակցությունների բուռն հակազդեցությունը: Իսկ թուրք խառնամբոխի «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» մակագրությամբ օրեր, շաբաթներ, ամիսներ շարունակ մարզադաշտերում բարձրացրած ցուցապաստառներն ու ինքնամոռաց բացականչությունները լկտիության գազաթնակետն էին:

Ի դեպ, եթե վերոհիշյալ կուսակցությունները հակազդեցությամբ նախադրյալներ էին ստեղծում «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» մակագրությամբ ցուցապաստառների բարձրացման համար, ապա թուրք խառնամբոխը ինքնամոռաց բացականչություններով արտահայտում էր մարդասպանին նմանվելու անզուսպ մոլուցքը, որ գովերգի սպանությունը: Հատկանշական է, որ վերոհիշյալ կուսակցություններն առաջնորդվում են քեմալական ազգայնականությամբ, իսկ խառնամբոխին մարզադաշտեր էին առաջնորդում քեմալական մտածողության միությունները:

«Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք» կարգախոսին հակազդելու պատրվակով, մարդասպան Սամասթին պաշտպանության տակ առնելու քեմալական ազգայնականների արարքը, որոնց համար առաջամարտիկի դեր են կատարում քեմալական մտածողության միությունները, մասնակի հիմնավորում է Դինքի սպանության կազմակերպմանը «խորքային պետության» մասնակցության մասին թուրքական իրականության մեջ շրջանառվող կարծիքը: Այլ կերպ, «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» բացականչություններով մարդասպանին պաշտպանելու քեմալական ազգայնականության փորձերն իրականում ոչ այլ ինչ են, քան հասարակության ուշադրությունը խառնամբոխի ագրեսիվ նկրտումների վրա բեւեռելու միջոցով Դինքի սպանությանը «խորքային պետության»

ուղղակի, կամ անուղղակի մասնակցությունը քողարկելու դրսեւորում:

Թուրքիայում «խորքային պետությունը» գործում է քեմալական ազգայնականության քողի տակ: Իսկ դրա գործունեությունը վերահսկում է դեռեւս Քեմալ Աթաթուրքի օրոք ձեւավորված առանձնաշնորհյալ ընտրախավը, որի առանցքում «երջանիկ փոքրամասնության համայնք», «սպիտակ» կամ «վարդագույն թուրքեր» հորջորջվող «ոյրնմեններն» են: Թերեւս այս հանգամանքը առիթ է տվել իսլամական մամուլին նշելու. «Դինքին սպանեցին նրանք, ովքեր Նոբելյան մրցանակի են արժանացրել Օրիան Փամուքին»:

Թեւ Դինքի սպանության հարցը դրվեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի հունվարի 15-ի նիստի օրակարգում, որտեղ ներքին գործերի նախարար Բեշիր Աթալայն, ի պատասխան հետաքննության հասցեին արված քննադատություններին, ասաց, որ անում են այն, ինչ հնարավոր է, որպեսզի սպանության գործում չմնա ոչ մի մուք կետ, եւ հավաստիացրեց. «Չի մնալու, որովհետեւ դրա բացահայտումը մեր «ճիտին պարտքն է», սակայն բուն կազմակերպիչներն առ այսօր մնում են անհասանելի վարչապետ Էրդողանի կառավարությանը:

Հասարակական

Շանուն ինչի ենք մրոտում թղթերը...

Երանուհի Գրիգորի Խաչատրյան Արփիսար Գասպարի Այվազյան

Կարդում ես Իրանահայ գաղութի «**իննց մորուց համով ու հոտով ծնված**», «Քաղաքական և Փիլիսոփայական ժամանակակից գիտությունների ակադեմիական» մակարդակը ոտնակոխ տված, Պարոն/ Տիկին Ատ. Թամազյանի «Յոյս»-ում¹ հրատարակված երկու նամակները և ակամայից մտածում «Այ տղա / ախչի, բա դու մինչև հիմա որտե՞ղ էիր: Դու Քո այդ Սուպեր Տաղանդի Օվկյանական Խորությանը և Օանրակշիռ Դատողություններով, ինչո՞ւ ես մնացել մեր գաղութի երեքուն սովերների մեջ և սուրբ ճոճելով հրապարակ չես իջել»:

Հիմնական հարցն այն է, որ «Ինչո՞ւ էիր սպասում, որ Ռուբենի նման մի – Ո՛չ մասնագետ - մարդ գա, խոսք բացի «Թափանցիկության և նրա չափավորության մասին» մինչև դու քո Հանձարով և Հրաշալիքներով հրապարակ իջես և փրկես մեր ժողովրդին «Թափանցիկության և չափավորության դառնաղետ Չափազանցումներից»:

Հրաշամանուկ հայրենակից:

Երեխան դեռ չսաղմնավորված մտահոգված ես, որ եթե ատամները ծուռը եղան, կամ գլուխը քաչալ ինչ հող պիտի տանք մեր գլխին:

Ո՞ւմ ջաղացին ես փորձում ջուր լցնել, Ատ.-ը ջան: Ասում եմ ազիզ Ատ. չլինի ինչ - որ գաղտնի մի բան ունես և վախենում ես, Գոռ- բաշոփի նման «Չափավորության» զոհը դառնալուց ու տարիներիդ վաստակը ջուրը թափելուց: Խոսքը մեր մեջ, չլինի մի կյանք անթափանցիկության հովանու ներքո ապրել ու ինչ-որ աթոռ (դեռ բազկաթոռ չեմ ասում) ես «ձեռ գցել» ու պինդ նստել ես վրան ու վախենում ես, որ «Թափանցիկության» ալիքը գա, աթոռդ թոցնի ձեռքիցդ ու մեկ կյանք թափածդ ջանքերը...

Չէ լեզուս լալանա քեզ այդ օրն ընկած չտեսնենք:

Նամակներիցդ նման մի գարշահոտ է գալիս: Չնայած նրանք այնքան թափփված են, այնքան վայրիվերո և ափեղցփեղ, որ պարզապես զարմանում ենք, թե «Հույսը» ինչպես և ինչու է նման տրամաբանությունից զուրկ, անեզրակացություն և անբովանդակ նամակի համար իր երեք ամբողջական էջերը վատնել: Ամեն ինչ պետք է գոնե որոշ որակ ունենա հասարակությանը ներկայացնելու համար: Հասարակությունը ինչ մեղք է գործել, որ հիվանդ ուղեղների, նման արտաթորանքին պետք է արժանանա: Ափսոս...

Հետաքրքիր է, որ «Լույս»-ն ու «Հույս»-ը, որ մեր գաղութի երազանքներից են և գնում են, իրենց համար տեղ բացելով, այս «Անժուրացած» գաղութին մի քիչ նոր «ժուր», ուժ ու եռանդ ներշնչելու, քո կողմից նման ստորացուցիչ, ծաղրական ու «Մասխարա», թունառատ խայթոցների են արժանանում:

Ինչո՞ւ: Հանուն ո՞ւմ և ինչի՞...

Ի՞նչն է քեզ նեղում, որ Քարմեն Ազարյանը կին է և տղամարդ չի և գոնե քեզանից ավելի շատ քաջություն ունի իր իսկ անունով ու ազգանունով երևան գալու:

Ինչո՞ւ Թամազյան ջան ու ճան: Գրածներիցդ երևում է, որ Սեռական լուրջ պրոբլեմներից էլ գաղտագողի տառապում ես: Դե թանկագինս, դիմիր բժշկի, եթե դեռ ուշ չէ իհարկե: Ռուբենին չես հավանում, Ռանդոֆին կամ Ռուդոլֆին դիմիր: Քաղաքը լիքն է սեռա - հոգեկան հիվանդությունների մասնագետ բուժակներով ու բժիշկներով: Եթե այդպես չլիներ, «լույսի» էջերում սիրածդ սեռական հոգվածների հետևից ման չէիր գա և հասարակա - քաղաքական թափանցիկությունը չէիր շփոթի Նուրբ Սեռի Անոթխած Թափանցիկության հետ:

Ամպերից ու Աստղերից էլ վեր կանգնած Բարոն կամ Բարոնես Ատ. այդ կամավորականների լուրը արդյո՞ք «Լույսի» հնարածն է, որ քեզ Չինական գանգվածային արտադրանքի ժամացույցների ճշգրտությամբ դողերոցքի մեջ է գցել և միանգամայն «Ազգամտահոգ» դարձրել:

Եհիտն ասած քո երկրորդ նամակից և արտահայտություններից գուշակում ենք, որ քառասունդ գոնե շուռ ես տվել(°): Ուրեմն բավական փորձառություն պիտի ունենայիր, բայց Ինքնահավանության Կնճիթի Ծայրից տեղացող «Անծայր ու անպոչ, ցանցառ արտահայտությունների և արկածախնդրական վայրիվերո, իրար հակասող խորհուրդներդ» հակառակն են ասում: Եթե Դու Քարմեն Ազարյանի, թե «Փուլ առ փուլն ես ընդունում, թե Փաթեթայինը, թե բոխչա-բոխչեն և թե...» (որ ընդունում ես նամակիդ վերջում) բա էլ երկու էջ, խզբզոցներդ ինչի համար են բալա ջան (բալայի պարսկերեն իմաստով):

Չէ՛ Դու անպայման հոգեբուժի կարիք ունես: Որքան շուտ, այնքան լավ:

Տեսնենք երրորդ նամակումդ փիլիսոփայական ինչ տարափ ես տեղալու մեր խեղճ գաղութի գլխին: Երևի

¹ Տ'ես «Յոյս» համար 11, 13 և 16 / 2007թ.

նյութապես ապահովված մարդ ես և ժամանակ, և գրի՛չ, և թանաք, և թուղթ ու մագաղաթ, (Զթափանցիկության հովանու ներքո) բավական վաստակել ես և տնտեսել նեղ օրվա համար:

Գրի՛ր լուսաբանվենք և մեզ հեռու պահենք հավանական և անհավանական թափանցիկություններից:

Չնայած մենք շատ փոքր ենք քո նման «Բնածին Տաղանդին» խորհուրդ տալու համար, բայց որովհետև մի քանի անգամ նամակներդ կարդալուց հետո էլ «Յեչ կոնկրետ Բան» չենք հասկացել, - բայց այնուամենայնիվ ելնելով քո երևան գալու ընչաքաղցությունից - խորհուրդ ենք տալիս նրանց մի քանի լեզուների թարգմանել տալուց հետո, «Ատ. Թամազյանի Դեղատոմսերը» անունով ու ազգանունով (որպես աշխարհատարած Յարի Փաթերի մրցակից) հրատարակես մեկ կամ երկու գրքով: Այդ «մտքերը» ափսոս եմ, որ միայն մեր գաղութները լինեն, նրանք պետք է ամբողջ աշխարհի տրամադրության տակ դրվեն:

Եթե հնարավոր է մի քիչ ավելի շատ Քո անցյալից ու փորձառություններից գրես, որպեսզի տեսնենք, թե ինչ անձնավորություններ և միություններ են Քեզ հետ համագործակցելու երջանկությունը ունեցել, և այսօրվա դրությամբ միջազգային ինչ մակարդակի վրա են կանգնած նրանք, և ինչո՞ւ ՄԱԿ-ը մինչև օրս Քո նման ԱՆ՝ նմանին Նյույորք չի կանչել...

Գուցե էլ կանչել է, չես գնացել: Յա՞:



Ցավակցական

«Լույս» ամսագրի խմբագրական կազմը անհուն վշտով համակված ցավակցում է Վահիկ, Վերգիսե, Անգիսե, Վարագդատ, Ալիսիա Խաժակիներին ու նրանց հարազատներին՝ իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝ **Այդա Խաժակի (Խաջանյանի)** վաղաժամ եւ ցավալի մահվան առթիվ, որը տեղի ունեցավ հունվարի 6-ին Երեւան-Թեհրան հանրակառքի վթարի հետեւանքով:

Ցավակցական

Անհուն վշտով համակված ցավակցություն ենք հայտնում Մինասյան եւ Նահապետյան ընտանիքներին՝ իրենց կրած ծանր եւ անփոխարինելի՝ **Իշխան Նահապետյանի (Մինասյան)** ցավալի մահվան կապակցությամբ:

Փանոսյան եւ Բաղդասարյան ընտանիքներ

Ցավակցական

Անհուն վշտով համակված ցավակցություն ենք հայտնում Ալավերդյան ընտանիքին իրենց կրած ծանր եւ անփոխարինելի՝ **Յարապետ Ալավերդյանի** ցավալի մահվան կապակցությամբ:

Փանոսյան եւ Բաղդասարյան ընտանիքներ

Համաշխարհային Հայկական Կոնգրեսի գործունեության մասին

2007 թվականի դեկտեմբերի 26-ին Համաշխարհային Հայկական Կոնգրեսի (ՀՀԿ) փոխնախագահ պրն. Վլադիմիր Աղայանը, հարցազրույց ունենալով «Նոյան Տապան» լրատվական գործակալության հետ, ներկայացրել է ՀՀԿ-ի 2007 թվականի աշխատանքները: Քանի որ Թեհրանում մեր համայնքի մի մասը հետաքրքրված է ՀՀԿ-ի աշխատանքներով եւ համագործակցության եզրեր է փնտրում կոնգրեսի հետ, «Լույս» ամսագրի այս համարին կից ձեզ ենք ներկայացնում սույն հարցազրույցը:

Հարցազրույց Հ Հ գեղանկարիչ պրն. Արշալույս Աղայանի հետ

Հարց.- Խնդրում ենք համառոտ ներկայացնել Ձեր իրան ժամանելու առաքելությունը և մի փոքր էլ Ձեր կենսագրությունից:

Պատ.- Ծնվել եմ 1946 թվականին Բուլվարի շրջանում: Ավարտել եմ Թեհրանի «Արաքս», «Գոհար», «Արարատ» և գիշերային «Խարազմի» և գեղարվեստական ուսումնարանը: Եղել եմ ուսուցիչ «Արարատ», «Մազիար» և «Քուշեշ Դավթյան» դպրոցներում: 1973 թ.-ի նոյեմբերին հայրենիք եմ վերադարձել: Հայաստանում ստացել եմ ակադեմիական կրթություն, եղել եմ Հայաստանի և Խորհրդային Միության նկարիչների միության անդամ, կազմակերպել եմ ցուցահանդեսներ, ունեմ նկարներ թանգարանում, ներկայումս էլ ստեղծագործում եմ և զբաղվել եմ հասարակական, մշակութային և մանկավարժական գործունեությամբ: Իրանում երիտասարդ ժամանակ, Մաջիդիեում կամ Ջեթուն թաղամասում ստեղծել էինք «Աբովյան» գրադարան, որոշ ակտիվիստների հետ իմ առաջին նկարչության ցուցահանդեսը տեղի ունեցավ և հետո տարբեր տեղեր և վերջում Թեհրանում իմ հրաժեշտի ցուցահանդեսը եղավ, հայկական ու պարսկական մանուլը դրան անդրադարձավ: Հայաստանում հաջողություններս լավ են եղել, դժվարություններ շատ են եղել և պայքարել եմ դրանց դեմ և, փառք Աստծո, հաջողել եմ:

Անտարբեր չեմ եղել մեր քաղաքական, տնտեսական և ընկերային կյանքի նկատմամբ: Առաջիններից ենք եղել, որ իրան բառը օգտագործել ենք շատ լրատվամիջոցներով, որպես հայ ժողովրդի բարեկամ երկիր տարբեր առումներով: Ստեղծել ենք միություն, որը սկզբում կազմվել է «ԲաՖՖի» անվան տակ և հետո «Հայրենադարձ իրանահայերի հասարակական և մշակութային կազմակերպություն», որը գրանցել ենք պետականորեն 1992 թվականին: Ես համարվում եմ միության հիմնադիրներից, ունեցել ենք բեղուն գործունեություն մանավանդ Դարաբաղյան ազատագրական շարժման մեջ: Հայաստանում մեր իրանահայ համայնքը ամենաակտիվիստներից է եղել այդ շարժման ժամանակ: Մեր միության հիմնական խնդիրը եղել է Իրանի հայության հայեցի մշակութի հավաքագրելը, ի մի բերելը և տարածելը և ընդգրկելը հայ ժողովրդի պատմության կողքին:

Իմ այս ճամբորդության հիմնական նպատակը եղել է իրանահայ մատենագիտության աշխատության հրատարակման գործը և մի երկու հոդվածներ կապված պատմիչ Առաքյալ Դավիթեցու Ս. Էջմիածին այցելության

շուրջ: Իմ կյանքի ու գործունեության մասին հրատարակվում է գիրք, որի համար պետք է որոշ նկարներ հավաքագրեն: Հիմա մենք ունենք խնդիր նորանկախ Հայաստանի կողքին կանգնելու և կառուցելու և բարեբախտաբար մեր համայնքը միշտ աջակցել է, մեր բարեկամ Իրանը նաև միշտ աջակցել և Հայաստանի կողքին է եղել: Մենք գնում ենք դեպի լավ կյանք ու լավ ապագա:

Հարց.- Ինչպես ե՞ք գնահատում իրանահայերի ներգաղթը դեպի Հայաստան:

Պատ.- Մեր մեծ պապերը գրել են, որ մենք եկանք Իրան, բայց հույս ունենք շուտով կվերադառնանք մեր հայրենիք: Այս ոգին պահվել է և ես գերազանց գնահատական եմ տալիս հայրենադարձության երևույթին և մեր ուժերով միշտ նշել ենք Հայաստանում հայրենադարձության 40 և 50 ամյակը: Միայն հայրենադարձները տարբեր երկրներից եկած՝ ստալինյան զոհ դարձան 1946 թվականի այդ դաժան օրերին:

Հարց.- Ինչպիսի՞ն է եղել իրանահայ հայրենադարձների պահվածքը կամ ներդրումը Հայաստանում:

Պատ.- Հայկական պետական մտածողությունը ապացուցել են իրանահայերը: Սկսած Նոր Զուղայի տպարանից, որ ունի 350 տարվա պատմություն, Հովսեփ Էմինին հիշենք, որ անկախության համար մեծ գործունեություն ծավալեց, հիշենք առաջին հայ մամուլը՝ «Ազդարարը» Հնդկաստանի Մադրաս քաղաքում, որ իրանահայերի միջոցով էր հրատարակվում, առաջին սահմանադրությունը հայ իրականության մեջ գրեցին իրանահայերը՝ Շամիրյանները: Այսպիսով՝ իրանահայերը ամբողջ էությամբ դարեր շարունակ ամեն ինչով կանգնած են եղել Հայաստանի կողքին և մեծ ավանդ ունի պետականությունը վերականգնելու գործում և անկախության գործում: Մենք այս ուղղությամբ փաստեր շատ ենք հրատարակել, օրինակ, մի գիրք՝ «Հայրենադարձ իրանահայ դեմքեր», որտեղ կան մեր ազգի լավագույն դեմքերից՝ շուրջ 53 հոգի: Այն իրականությունը, որ իրանահայերը հրատարակել են 2500-ից ավել գիրք ինքնին փաստ է:

Հարց.- Պատմեք Ձեր միության մասին, ի՞նչ անհրաժեշտությունից ելնելով հիմնադրվեց և ներկայումս ինչ վիճակում է:

Պատ.- Մենք հասարակական և մշակութային կազմակերպություն ենք եղել, որը նպատակադրել է ի մի բերելու իրանի հայության բոլոր հատվածների ու բոլոր ժամանակների մշակույթը, որը պետք է ներկայացվի իրանահայության մշակութային պատմությունը: Սա մեր գեր խնդիրն է եղել, որովհետև Հայաստանում ապրող մտավորականությունը մոտիկից ծանոթ չի համայնքների պատմությանը, յուրաքանչյուր համայնք ինքը պիտի գրի իր պատմությունը և մենք առաջին համայնքն ենք հայ իրականության մեջ, որ մեր պատմությունը ամբողջական պատրաստում ենք: Այդ կապակցությամբ կազմակերպել ենք հանդիպումներ, հրավիրել ենք Նոր Զուղայի թանգարանի տնօրեն պրն. Լևոն Մինասյանին, արժանացել ենք Հայաստանի տարբեր բարձրագույն պարգևներով, կազմակերպել ենք ազգային ու կրոնական տոներ, տարբեր կազմակերպություններում մեծարել ենք մեր երախտավորներին: Հիմա էլ մեր առաքելությունը շարունակվում է ոչ թե հավաքական ձևով կամ հավաքատեղի ունենալով, այլ զբաղվում ենք մատենագիտությամբ, տպագրությամբ ու մի քանի գրքեր ենք գրել, որ պիտի նրա հանդեսը կազմակերպել ՀՀ գրողների միությունում: Խանդավառված ենք, որ ունենք

այսպիսի հրաշալի իրանահայ մշակույթ, որովհետև աշխարհում չկա մի ժողովուրդ, ուրիշ երկրում ապրած լինի չորս դար և պահած լինի իր մշակույթն ու դավանանքը, սա աշխարհում օրինակելի մի երևույթ է:

Հարց.- Վերջին տարիներում իրանահայերի մի մասը տարբեր առիթներով գտնվում են Հայաստանում, ինչպես ե՞ք գնահատում այդ երևույթը:

Պատ.- Մի ընդհանուր պատկերացրեք, որ իրանահայությունը ամռան օրերին դուրս է գալիս Երևանի փողոցներից, այդ դեպքում Երևանի համ ու հոտը կնկնի: Մեր իրանահայ ժողովուրդը մեր պատմության կրողն են: Իրանահայ հատվածը ամենավաղույներից է, որ պարծենալու շատ տեղ ունի, նա տվել է ԲաՖՖի, Չարենց, Գեղամ Սարյան, Դեվ, Հովհաննես Բաղալյան, Երվանդ Մանարյան, Բաբկեն Չուքազյան, որոնք բոլորն էլ ազգային դեմքեր են: Անկախացումից հետո իրանահայությունը իր ներդրումն է ունեցել շատ գործերում և օրինակ է ծառայել: Իրանահայ հատվածը ապրելով Իրանի պես երկրում մեծ դեր է ունեցել իրանահայկական, հայ-իրանական, հայ-ռուսական, ռուս-հայկական և եռանկյունի շփումներում:

Հարց.- Մեզ մոտ կրանում որոշ հայ մտավորականներ 1946 թվականի հայրենադարձությունը գնահատում են որպես աղետ, ի՞նչ կասե՞ք այդ կապակցությամբ:

Պատ.- Ինչպես ասացի հայրենադարձության երևույթը հրաշք էր, որ տեղի ունեցավ և հանրապետության քանակը շատացավ և Հայաստանը հաստատվեց որպես հանրապետություն և հայրենադարձները պատճառ դարձան, որ բնակչության քանակը ավելանա և դրա չլինելը աղետ կլիներ: Իհարկե, 1946 թ.-ի Ստալինյան բռնապետությունը նաև չարիք էր մեզ համար և մեծ քանակությամբ հայրենադարձներ քստրվեցին Սիբիր:

Հարց.- Ի՞նչ անելիքներ ունեք հետագայում:

Պատ.- Ծրագիր ունեն շահ աբասյան ճանապարհով, որ մեր ժողովուրդը անցել է և բնակվել է իրանում, հիմա Իրանի ազատ պայմաններում նույն ճանապարհով անցնեն իմ մեքենայով և նկարեն, կտավներով ու ներկերով, գալ հասնել Երևանից Մեղրի և նկարելով ամենակարևոր ու աչքի զարնող տեսավայրերը և ճարտարապետական կառույցները, լեռներն ու բնությունը հասնել Թադեի Վանք, Ծործորի վանք և գալ հասնել մինչև Թեհրան և Իսֆահան, որտեղ տեղավորեցին մեր ժողովրդին... Այդ ճամբորդության նկարները դարձնել մի ցուցահանդես Երևանում և Թեհրանում: Սա իմ անձնական ծրագիրն է, իսկ միության շրջանակներում նորից հրատարակել գրքեր:

Զանապանք

Ճամբորդիկ՝ որպեսզի առողջ մնաս

Հոգեբանները ասում են ճամբորդությունը կրճատում է ներվային լարվածությունը, ճամբորդությունը անհրաժեշտ է Ֆիզիկական ու հոգեկան առողջության համար:

Ճամբորդությունը փորձառություն է, որ մարդուն դրդում է դեպի կյանքի առաջադիմություն: Տնտեսագետները ճամբորդությունը այնքան են կարևորում, որ խորհուրդ են տալիս ընտանիքներին իրենց ընտանեկան բյուրջի մի մասը հատկացնել ընտանիքի ճամբորդությանը:

Անպայման ձեր կյանքում փորձառություն ունեք, թե ինչպես է ճամբորդությունը բարձրացնում

տրամադրությունն ու շահագրգռվածությունը կյանքի տարբեր ասպարեզների նկատմամբ: Հաճախ ճամբորդությունից հետո բարձրանում է ժողովրդի գործունակությունը:

Ճամբորդությունը, թե գործով լինի, թե ուրիշ պատճառով, կարող է շատ հոգեւոր եւ Ֆիզիկական լիցք փոխանցի մարդուն եւ նպաստի առողջությանը: Ճամբորդելը պատճառ է դառնում, որ մի քիչ հանգստանաս ու հեռանաս ներվային դժվարություններից ու առօրյա հոգուերից, վերացնում է գործից կամ ուրիշ պատճառներից առաջացած հոգնածությունը, որովհետև ծանոթանում ես նոր քաղաքների, երկրների եւ տարբեր ազգերի մշակույթների հետ: Ճամբորդության ընթացքում ճամբորդը ավելի շատ է լինում բնակարանից դուրս եւ բացօթյա տարածքում եւ այդպիսով կարող է շնչել ավելի թարմ ու մաքուր թթվածին, որն էլ բարձրացնում է մարմնի դիմադրողականությունը:

Գործի դասավորելը զվարճանքի մի մասնիկն է, երբ մտածում եք, որ պետք է ճամբորդեք, այդ գործի դժվար պահանջները համար ավելի հեշտ է անցնում, որովհետև գիտեք, որ մի քանի օրից ճամբորդության եք գնալու և ազատվելու եք կյանքի հոգուերից: Ճամբորդությունը պատճառ է դառնում ձեր հայացքը հանդեպ մշակույթին եւ ձեր քաղաքին փոփոխվի:

Եթե շատ եք ճամբորդում ավելի շատ ուսումնասիրեք ձեր ճամբորդության օգտակար կողմերը, որովհետև այդ դեպքում ձեր ճամբորդությունը ավելի հաճելի կդառնա:

Արամիկ Զարեհ

ՎԱՄՃԱՆԿԵՑ ԲՈՒԻ ՖԻՇԵՐԸ

Իսլանդիայի հիվանդանոցներից մեկում 64 տարեկանում վախճանվել է շախմատի աշխարհի 11-րդ չեմպիոն Բոբի Ֆիշերը:

Լեգենդար շախմատիստը վերջին երեք տարիներին բնակվում էր Իսլանդիայում, որը նրան քաղաքական ապաստան էր տվել փրկելով ԱՄՆ-ի իշխանությունների հետապնդումներից, որոնք Ֆիշերին սպառնում էին երկարատև բանտարկությամբ:



Ֆիշերը ծնվել էր 1943-ի մարտի 9-ին Չիկագոյում: Նրա հայրը գերմանացի էր, մայրը՝ ժազուճով հրեա շվեյցարացի: Արդեն 13 տարեկանում նա նվաճեց ԱՄՆ-ի պատանիների չեմպիոնի տիտղոսը: Մեկ տարի անց հաջողությունը կրկնեց արդեն ԱՄՆ-ի մեծահասակների առաջնությունում՝ դառնալով երկրի ամենաերիտասարդ չեմպիոնը: Իսկ 15 տարեկանում նրան շնորհվեց գրոսմայստերի կոչում, ինչը Բորիս Սպասկու ռեկորդային արդյունքը գերազանցեց:

1972-ին Ֆիշերը Սպասկու հետ Ռեյկյավիկում կայացած մրցախաղում նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ֆիշերն այն տարիներին աչքի էր ընկնում իր կամակոր բնավորությամբ եւ հաճախ էր մրցաշարերի կազմակերպիչներին իր անսովոր պահանջներով դժվարին կացության մեջ դնում: 1975-ին նա հրաժարվեց ԱՄՆ-ի Կարպոլի հետ մրցախաղում պաշտպանել աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը եւ հեռացավ շախմատից: Երկար տարիներ նրա մասին որեւէ տեղեկություն չկար, նա խուսափում էր մարդկանց հետ շփումից:

Մշակութային

Շրայա Աճառյանը Պարսկաստանում

Իր «Կյանքիս հուշերից» Գրքից

ԷՆՁԵԼԻ ԵՒ ՀԱՅԵՐԸ ԷՆՁԵԼԻՈՒՄ

Էնգելիից մեկնելուց առաջ, սկսեմք նկարագրել քաղաքի դիրքը և տեղացի հայոց վիճակը առհասարակ:

Պարսկաստանի հարուստ նահանգներից մեկն է Գիլանը, որ հին ժամանակ կոչվում էր Վրկանաց աշխարհ, նա տարածվում է Կասպից ծովի եզերքը և այնտեղից հարավ մինչև Մենջիլ. բնակչությունը գլխավորապես պարսիկ է, որոնք ունեն մի առանձին բարբառ, որ կոչվում է գիլաբի: Գիլանի կլիման շատ մեղմ է. ձմեռ գրեթե չի լինում, դրա համար էլ կանաչությունը շատ ճոխ է. մեծ քանակությամբ հասնում է լիմոն և նարինջ իրենց բոլոր տեսակներով, այդ Քաղցրաբույր պտուղների ծառերը առատորեն տարածված են Գիլանի ամեն կողմը, պարտեզների մեջ ու անտառներում: Մակայն միևնույն ժամանակ Գիլանի օղը խոնավ է ու թաց. անձրևները շատ հաճախ ու երկարատև են, այս պատճառով սաստիկ տարածված են ջերմը, մալարիան ու հողացավը:

Էնգելին Գիլանի գլխավոր նավահանգիստն է Կասպից ծովի եզերքում, այստեղ ծովը մի մեծ լիճ է ձևացնում, որ կոչվում է Մուրդաբ (մեռյալ ջուր) և մի նեղ անցքով՝ նեղուցով միանում է ծովին: Միացման կետում ռուսները շինել են ծովի մեջ առաջացող մի հաստատուն քարափ, որով ձևացել է մի պատվական նավահանգիստ, և, այդ նավահանգստի մեջ են կանգնում բոլոր նավերն ու շոգենավերը: Նեղուցի երկու կողմը փոփած է քաղաքը, արևմտյան կողմը կոչվում է Էնգելի, հանդիպակաց արևելյան կողմը՝ կոչվում է Ղազիան և համարվում է առանձին քաղաք: Մուրդաբի մեջ կան բազմաթիվ կղզիներ, ոմանք անբնակ, ոմանք բնակված, որոնցից մեծագույն է Միլանփուշտ կոչված կղզին՝ Էնգելիի դեմ ու դեմը:

Մեծ քաղաք չէ Էնգելին, Կովկասի գավառական քաղաքների մեծությունն ունի, փողոցները նեղ, խանութները փոքրիկ ու աննշան, ման ես գալիս շուկան, կարծում ես, թե փոխադրվել ես Պոլսի հեռավոր թաղերից մեկը, ծովի տեսարանը ավելի մեծացնում է այդ նմանությունը:

Էնգելիի հայոց գաղթականության հնագույն վիճակի մասին տեղեկություններ շատ քիչ կան. ամենահին արձանագրությունը, որ ես գտա, 1817 թվականից մի

տապանաքար է, որ այժմ ագուցված է հայոց եկեղեցու հյուսիսային պատի մեջ արտաքին կողմից: Դա արդեն նշանակում է, որ էնգելիի հայոց գաղութը մի դարից ավելի հնություն ունի: Եկեղեցու ներկա երեսփոխ պարոն Փիլիպոս Գիլանցյանը պատմում էր, թե սրանից մոտ 70 տարի առաջ էնգելիում կար ընդամենը 70 տուն հայ, որոնք զբաղվում էին զանազան արհեստներով: Նրանք ունեին մի փոքր եկեղեցի՝ եղեգնից շինված՝ ներկա եկեղեցու տեղում, որ կոչվում էր Ս. Աստվածածին: Այդ ժամանակ քաղաքում ժանտախտ ծագեց, բոլոր հայերը ցրվեցին դեպի Լենքորան և այլուր. մնաց միայն 3 տուն, որոնցից մեկը հենց Գիլանցյանների գերդաստանն է: Գնացողներից ոմանք ճանապարհին մեռան, շատերը հաստատվեցին իրենց նոր հայրենիքում և այսպիսով էնգելիի հայ գաղութը վերջացավ:

Ժանտախտից հետո նորից սկսեց հայություն հավաքվել էնգելի, նրանք էլի հաստատվեցին իրենց եղեգնյա հին եկեղեցու շրջակայքում, այդ եկեղեցին հրդեհից այրվեց (մոտ 60 տարի առաջ) և հայերը նորից շինեցին՝ դարձյալ եղեգնից: 1874 թվականին աստրախանցի Ուզլով անուն հայ վաճառականը հայ ժողովրդի մեջ հանգանակության ձեռնարկեց և շինեց մի աղյուսաշեն եկեղեցի: Պարսիկները շատ սիրով էին հայոց հետ. հաստատվում է երեցփոխ պարոն Գիլանցյանը և նրանցից շատերը մասնակցեցին հանգանակության: Եկեղեցու շինության ժամանակ ըստ հայկական սովորության, պատի մեջ են ագուցել մինչև այն ժամանակ եղած տապանաքարերից մի մասը, որոնց հնագույնը, ինչպես ասացի, 1817 թվականից է և նորագույնը 1868 թվականից: Այս եկեղեցին է, որ մնում է մինչև այժմ և գտնվում է քաղաքի լավագույն մասում, շուկայի մոտ, ծովափնյա նարնջենիների պարտեզի հետևում, Խիաբանիշեն-ուլ-ամարա և Քուչայ-ի-քիլիսայի-արամինե (Հայոց եկեղեցու փողոց) անուն փողոցների անկյունում: Եկեղեցու բակում գտնվում է փաքր գերեզմանատուն, որ ծառայել է և ծառայում է ոչ միայն հայերի, այլև ամեն ազգի քրիստոնյաների համար: Գերեզմանաքարերից մեծագույններն ու լավագույնները պատկանում են ռուս, հույն, ֆրանսիացի և այլ մեռյալների:

Եկեղեցու բակի մեջ է նաև դպրոցը, որ երկհարկանի մի շենք է՝ հինգ սենյակով, շինվել է 1900 թվականին: Բակից դուրս՝ եկեղեցու կողքին կա մի ավելի մեծ շենք, որ ծառայում է թե՛ իբր թատերասրահ և թե՛ իբր դահլիճ՝ դպրոցական հանդեսների համար, շինվել է սրանից չորս տարի առաջ:

(Շարունակություն 5)

ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊՈՐՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
բան. գիտ. դոկտ.

Դ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՔԱՍԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երրորդ դարը հայ իրականության մեջ քրիստոնեական քարոզչության տեղադրումը շրջան էր, որը Տրդատ արքայի ժամանակ (298 և 330 թթ.) պսակվեց հաղթանակով. 301 թ. Հայաստանում մերժվեց հեթանոսական հավատը, եւ հաստատվեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Դա վճռական շրջադարձ էր հայության ոչ միայն գաղափարական աշխարհում, այլև քաղաքական կյանքում:

Քրիստոնեության թափանցմանը եւ հաստատմանը զուգահեռ՝ հայ Արշակունյաց պետությունը կտրուկ փոփոխություն ապրեց նաեւ արտաքին հարաբերություններում, քաղաքական կողմնորոշման մեջ: Մինչեւ Գ դ. առաջին քառորդը հարեւան Պարսկաստանում իշխում էր Պարթեւական հարստությունը, որի մի ճյուղն էին հայ Արշակունիները: Ահա թե ինչու երբ 996 թ. Պարսկաստանում սպանվեց Պարթեւ վերջին արքա Արտավանը, եւ երկրի իշխանությունն անցավ Սասանյաններին, անհաշտ պատերազմներ սկսվեցին Արշակունյաց Հայաստանի եւ Սասանյան Պարսկաստանի միջեւ: Այդ թշնամանքն ու պատերազմները տեւական դարձան ամբողջ Գ-Դ դդ. ընթացքում: Հայաստանն իր հայացքն ուղղեց արեւմտյան հարեւանին՝ հույներին, Հռոմեական կայսրությանը, ուր «Միլանի էդիկտից» (313 թ.) հետո քրիստոնեությունն ազատորեն պաշտվելու իրավունք էր ձեռք բերել, իսկ Դ դ. վերջին քառորդում, Թեոդոս Մեծ կայսեր ժամանակ (379 և 395), հեթանոսության դեմ տոնել իր հաղթանակը:

Քրիստոնեական եկեղեցին Հայաստանում ամրապնդեց ավատատիրական կարգը, ինքն էլ, կենտրոնական թագավորական իշխանության կողքին, դարձավ հզոր ուժ՝ նպաստելով ինչպես թագավորական տան կայունացմանն ու ամրապնդմանը, բայց հաճախ էլ իր շահերով բախման մեջ մտնելով Արշակունի գահակալների հետ՝ խրախուսելով եւ օժանդակելով հայ իշխանական տների ապստամբ ընթացքին եւ կենտրոնախույս ձգտումներին: Ավելի քան 150-ամյա մի շրջանում հայ ժողովուրդը մաքառեց պարսկական ժավալման, մյուս կողմից՝ Արեւելա և Հռոմեական կայսրության դեմ, որն ամեն կերպ ձգտում էր Հայաստանը պահել իրեն ենթակա վիճակում: Ուժերն անհավասար էին, եւ ամեն ինչ ավարտվեց Արշակունյաց Հայաստանի բաժանմամբ երկու մասի՝ Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ (387 թ.), ըստ որում փոքր մասն անցավ առաջինին, իսկ անհամեմատ մեծ բաժինը՝ Սասանյան Պարսկաստանին:

Այդ երկարատեւ մաքառման շրջանում կյանքի կոչվեց մեր հաջորդ ժողովրդական վեպը, որ ընդունված է անվանել «Պարսից պատերազմ»: Այն եւս բանավոր ճանապարհով է ստեղծվել, բայց գրառվել է համեմատաբար կարճ ժամանակ անց, Ե դարում: Նրա ամբողջությունը պահպանվել է հայ վաղ պատմիչների գործերում՝ «Ագաթանգեղա պատմության» եւ, մանավանդ, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ: Վերջինը բուն ժողովրդական վեպին հարազատ է մնացել այնքան, որ «Ագաթանգեղա պատմության» մի շարք հատվածների հետ՝ ավելի մեծ համարձակությամբ Արեւոյանն ազատ բանաստեղծության սկզբունքներով չափածո տողատմամբ է ներկայացրել նրա ավելի բազմածավալ մասերը: Վեպին քաջածանոթ է եղել եւ նրանից գիտնականի իր զուսպ չափավորությամբ օգտվել է Մովսես Խորենացին: Հետագայում է դ. պատմիչ Սեբեոսն իր աշխատության մեջ ուշադրության է արժանացրել այնպիսի հերոսական դրվագներ ու էպիկական հերոսների (Մուշեղ Մամիկոնյան, Սմբատ Բագրատունի, Թեոդորոս Ռշտունի), որոնք թեպետեւ ուղղակիորեն կապվում են Ձ-է դդ. պատմության հետ, սակայն ակնհայտորեն վիպական գունավորում ու հերոսական բնավորություն են ստացել Գ-Դ դդ. բանահյուսական պատումների ազդեցությամբ: «Պարսից պատերազմ» վեպի հետքերն ու նրա հետ նմանությունները նկատելի են նաեւ ավելի ուշ ձեւավորված «Տարոնո պատերազմ» վեպում, որի գրավոր աղբյուրը Հովհան Մամիկոնյանի (Ը դ.) «Պատմութիւն Տարօնոյ» գիրքն է:

(Շարունակություն 4)